

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ

պարոն ՀՈՎԻԿ
ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Արթուրյան

Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության կառավարության եզրակացությունը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորներ Վահան Հովհաննիսյանի, Արծվիկ Մինասյանի, Հրայր Կարապետյանի, Արտյուշ Շահբազյանի, Լիլիթ Գալստյանի, Արմեն Ռուստամյանի և Ռուզաննա Առաքելյանի՝ օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացրած «Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» և «Աշխատանքային վարձատրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքն ուժը կորցրած ճանաչելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի փաթեթի վերաբերյալ:

1. «Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի՝

1) 1-ին հոդվածի վերաբերյալ հայտնում ենք, որ «կարող է վճարել» ձևակերպումը օրենքի կիրառման ընթացքում տարաբնույթ մեկնաբանությունների տեղիք կտա և կարող է հանգեցնել գործատուների կողմից սուբյեկտիվ մոտեցումների.

2) 2-րդ հոդվածով առաջարկվում է նվազագույն աշխատավարձն ազատել հարկումից: Նշված դրույթն ընդունելի է, սակայն գտնում ենք, որ հարկային հարաբերությունները
AJV-45-11

Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի կարգավորման առարկան չեն, և այն անհրաժեշտ է ներառել Հայաստանի Հանրապետության հարկային օրենսդրությունում.

3) 3-րդ հոդվածով նախատեսված աշխատավարձը մեկ ամսվա ընթացքում 2 անգամից ոչ պակաս վճարման պարտականությունը կարող է լրացուցիչ ֆինանսական ծանրաբեռնվածություն առաջացնել Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի և տնտեսավարող սուբյեկտների համար: Բացի դրանից, անհրաժեշտ է նկատի ունենալ այն հանգամանքը, որ Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 192-րդ հոդվածով արդեն իսկ սահմանված է, որ գործատուն կարող է ամսական աշխատավարձ վճարել մեկ անգամից ավելի պարբերականությամբ, ուստի, գործատուի մեկ ամսվա ընթացքում 2 անգամից ոչ պակաս աշխատավարձի վճարման իրավունքը սահմանափակված չէ: Հաշվի առնելով նշվածը՝ գտնում ենք, որ հոդվածի անհրաժեշտությունը չկա:

2. «Աշխատանքի վարձատրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքն ուժը կորցրած ճանաչելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ առարկություններ չունենք:

Հարկ ենք համարում տեղեկացնել, որ առաջիկայում Հայաստանի Հանրապետության կառավարությունն օրենսդրական նախաձեռնության կարգով Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի քննարկմանը կներկայացնի «Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծը, որով կարգավորվում են նաև պատգամավորների առաջադրած հարցերը:

Ելնելով շարադրվածից՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունն առաջարկում է առայժմ ձեռնպահ մնալ պատգամավորների ներկայացրած օրենքների նախագծերի փաթեթի քննարկումից և դրան անդրադառնալ Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից ներկայացվող նախագծի քննարկումների ընթացքում:

Միաժամանակ հայտնում ենք, որ, ներկայացված օրենքների նախագծերի փաթեթը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում քննարկելիս, հարակից զեկուցմամբ հանդես կգա Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի առաջին տեղակալ Ա. Պետրոսյանը:

Հարգանքով՝

ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

Նախագիծ
Պ-723-28.09.2009-ՍՀ-010/0

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ**

«Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքում լրացումներ եւ փոփոխություն կատարելու մասին

Հոդված 1. Հայաստանի Հանրապետության 2004 թվականի նոյեմբերի 9-ի աշխատանքային օրենսգրքի (այսուհետ՝ օրենսգիրք) 167 հոդվածի 2-րդ մասը լրացնել հետևյալ նախադասությամբ՝ «Սույն օրենսգրքի 166 հոդվածի համաձայն աշխատանքի ներգրավված աշխատողին վճարվում է աշխատավարձ՝ անկախ ամենամյա արձակուրդի համար վճարումը կատարած լինելու հանգամանքից: Վճարված, սակայն չօգտագործված ամենամյա արձակուրդի օրերը հետագայում օգտագործելու դեպքում, այդ օրերի համար գործատուն կարող է աշխատողին չվճարել:»:

Հոդված 2. Օրենսգրքի 179-րդ հոդվածը լրացնել 4-րդ մասով հետևյալ բովանդակությամբ՝

«4. Նվազագույն աշխատավարձը հարկման ենթակա չէ:»:

Հոդված 3. Օրենսգրքի 192-րդ հոդվածի առաջին մասում՝

ա) «մեկ» բառը փոխարինել «երկու» բառով,

բ) առաջին պարբերությունը լրացնել հետևյալ նախադասությամբ՝ «Ընդ որում, առաջին վճարումը (կանխավճարը) չի կարող պակաս լինել աշատավարձի 40 տոկոսից եւ ենթակա է վճարման մինչև երեք ամսվա 15-ը:»:

Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Նախագիծ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ**

**«Աշխատանքային վարձատրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքն ուժը
կորցրած ճանաչելու մասին**

Հոդված 1. «Աշխատանքի վարձատրության մասին» 2001 թվականի սեպտեմբերի 11-ի ՀՕ-226 Հայաստանի Հանրապետության օրենքն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՕՐԵՆՔՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄԸ

Աշխատանքային օրենսգրքում լրացումներ եւ փոփոխություն կատարելու այս նախաձեռնությունը վերաբերում է հետեւյալ հիմնական հարցերին՝

1. ամենամյա արձակուրդից աշխատողի հետ կանչման եւ վերջինիս կողմից աշխատանքի ներգրավումը հաճախ չի վարձատրվում այն պատճառաբանությամբ, որ անձը ստացել է արձակուրդային վճար: Իսկ առանձին դեպքերում կատարվում է արձակուրդային վճարի եւ պայմանագրով նախատեսված աշխատավարձի փոխարինում (հաշվանցում): Մինչդեռ այս երկու վճարները տարբերվում են իրարից թե իրենց տրամաբանությամբ եւ նաեւ հաճախ իրենց չափերով: Արձակուրդային վճարը աշխատողի նախորդ աշխատած ժամանակահատվածով (օրենսգրքի 164 հոդվածի համաձայն այդպիսի նվազագույն ժամկետ է սահմանվում, որպես կանոն, 6 ամսյա անընդհատ աշխատանքը) վաստակած իրավունքն է եւ անկախ նրանից անձը կշարունակի իր աշխատանքային հարաբերությունները տվյալ գործատուի մոտ թե ոչ, նա այդ իրավունքը ձեռք է բերել: Պատահական չէ, որ օրենսգրքի այլ դրույթներ (օրինակ՝ 170 հոդվածի 2-րդ մասը) վերաբերում են հենց այս իրավունքի ամբողջական իրացմանը: Բացի այդ, 170 հոդվածի 1-ին մասի համաձայն ամենամյա նվազագույն արձակուրդի փոխարինումը դրամական հատուցմամբ չի թույլատրվում: Այլ կերպ ասած, արձակուրդի համար կատարվող վճարումը աշխատավարձով փոխարինելը հակասում է նաեւ իրավական այս նորմին: Հետեւաբար առաջարկվող լրացմամբ հստակ սահմանվում է, որ թեկուզ անձը գտնվում է ամենամյա արձակուրդի մեջ, սակայն գործատուի կողմից հետ է կանչվել, ապա վերջինս պետք ստանա իր հետկանչման պահից սկսած կատարած աշխատանքի դիմաց՝ ընդհանուր սկզբունքով:

2. Օրինագծի 2-րդ հոդվածով առաջարկվող լրացման նպատակն է իրացնել աշխատանքի դիմաց վճարվող նվազագույն եկամուտը չհարկելու իրավական պահանջը, ինչը բխում է թե ՀՀ սահմանադրությունից եւ թե միջազգային իրավունքի նորմերից: Բացի այդ, այս համակարգը ներկայումս արտացոլված է նաեւ «Եկամտահարկի մասին» ՀՀ օրենքում՝ անձնական նազեցման տեսքով:

3. Օրինագծի 3-րդ հոդվածով առաջարկվող փոփոխությունն ու լրացումը նպատակ են հետապնդում ապահովել աշխատողի աշխատավարձ ստանալու եւ այն հնարավորիս հավասարակշռված ծախսելու պահանջը: Ամսական առնվազը երկու անգամ վարձատրություն ստանալու մեխանիզմը ներկայումս հանրապետության մասնավոր սեկտորի շատ կազմակերպություններում ընդունված պրակտիկա է եւ համապատասխանում է միջազգային

փորձին: Մյուս կողմից այն լրացուցիչ բեռ չի դառնա գործատուների վրա եւ էականորեն կարող է նպաստել առեւտրաշրջանառության ոլորտի արդյունավետ կարգավորմանը:

Անդրադառնալով Աշխատանք վարձատրության մասին օրենքն ուժը կորցրած ճանաչելու օրինագծին հարկ է արձագրել, որ «Աշխատանքի վարձատրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքն ընդունվել է դեռեւս 2001 թվականի սեպտեմբերի 11-ին: Այս օրենքով սահմանված մի շարք նորմեր իրենց արտացոլումն են ստացել 2004 թվականի նոյեմբերի 9-ին ընդունված աշխատանքային օրենսգրքում, որի գործողության մեջ դնելու մասին նույն ամսաթվին ընդունված օրենքի 3-րդ հոդվածը սահմանում է, որ օրենսգրքը գործողության մեջ դնելուց հետո 1 տարվա ընթացքում անհրաժեշտ է օրենսգրքին համապատասխանեցնել աշխատանքի իրավունքի նորմեր պարունակող իրավական ակտերը: Բացի այդ, այս օրենքի ընունումից հետո, 2005թ. ՀՀ սահմանադրությունում կատարվել են փոփոխություններ եւ լրացումներ, ՀՀ-ն միացել է մի շարք միջազգային փաստաթղթերի (օրինակ՝ Աշխատանքի միջազգային կազմակերպության «Աշխատավարձի պաշտպանության մասին» կոնվեցիային, 2005թ., Վերանայված եվրոպական սոցիալական խարտիային, 2004թ. եւ այլն), որոնց դրույթներով առաջարկվող կարգավորման սխեմաներից շատերն արատացված են նաեւ աշխատանքային օրենսգրքում եւ տարբերվում են «Աշխատանքի վարձատրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված մոտեցումներից (օրինակ՝ աշխատավարձի վճարման ձեւի համար օրենսգրքի 178 հոդվածի 5-րդ կետը սահմանում է, որ այն վճարվում է դրամով, մինչդեռ օրենքի 8-րդ հոդվածի 4-րդ կետը նախատեսում է տարիֆային աշխատավարձի մինչեւ 20 տոմոսի չափով վճարում գործատուի արտադրանքով): Ըստ էության ներկայումս ձեւավորվել է օրենսդրական տարբեր ակտերի միջեւ հակասություն, որոնց վերացման նպատակով առաջարկվում է ուժը կորցրաց ճանաչել այս օրենքը:

Այսպես. օրենքը բաղկացած է 13 հոդվածներից, որոնց վերաբերյալ ներկայումս առկա օրենսդրական ապահովվածությունը ներկայացվում է ստորեւ.

Օրենքի համապատասխան հոդվածը	նույն հարաբերություններին վերաբերող աշխատանքային օրենսգրքի հոդված/ներ/ը
Հոդված 1. օրենքի կարգավորման առարկան եւ ոլորտը	Հոդվածներ 1, 6, 7
Հոդված 2. աշխատանքի վարձատրության մասին օրենսդրությունը	Հոդված 4
Հոդված 3. աշխատանքի վարձատրության համակարգը,	Հոդվածներ 178-214
Հոդված 4. աշխատողների կատեգորիաները եւ գործատուները	Հոդվածներ 7, 17, 18 Այս հոդվածով կարգավորվող հարաբերությունները սահմանված են նաեւ պետական եւ համայնքային ծառայություններում աշխ. հարաբերությունները կարգավորող մի շարք այլ օրենքներով, որոնց հետ համեմատած առկա են մի շարք անհամապատասխանություններ:
Հոդված 5. աշխատանքի վարձատրության իրավական հիմքերը	Հոդվածներ 178-214
Հոդված 6. աշխատանքի վարձատրության նվազագույն չափը, բացառությամբ նույն հոդվածի 3-րդ մասի	Հոդված 179 3-րդ մասն առաջարկվում է իրացնել աշխ. օրենսգրքի 179 հոդվածում:
Հոդված 7. աշխատանքի վարձատրության տարրերը եւ	Հոդվածներ 178-214 Այս հոդվածով կարգավորվող հարաբերությունները սահմանված

ըստ աշխատանքի վարձատրոջությունը	են նաև ՀՀ սահմանադրությամբ, ինչպես նաև պետական և համայնքային ծառայություններում աշխ. հարաբերությունները կարգավորող մի շարք այլ օրենքներով:
Հոդված 8. աշխատանքի վարձատրության կարգը	Հոդվածներ 178-214 Այս հոդվածով սահմանվում է կարգավորման այլ ռեժիմ, քան օրենքի 8-րդ հոդվածի 4-րդ մասն է, ըստ որի աշխատավարձի մի մասը կարող է վճարվել գործատուի սեփական արտադրանքով: Օրենսգրքի 178 հոդվածի 5-րդ մասը ուղղակի սահմանում է, որ աշխատավարձը վճարվում է ՀՀ դրամով:
Հոդված 9. աշխատանքի վարձատրությունն աշխատանքի նորմալ պայմաններից շեղումների առկայության դեպքում	Հոդվածներ 183, 184, 185, 188, 190, 191
Հոդված 10. պարապուրդի վճարումը	Հոդված 186
Հոդված 11. ոչ լրիվ աշխատաժամանակի վարձատրությունը	Հոդվածներ 187, 189
Հոդված 12. աշխատանքի վարձատրության պետական երաշխիքների համակարգը	օրենսգրքի ընդհանուր մասին նորմերով, ինչպես նաև հոդվածներ 200-214
Հոդված 13. եզրափակիչ դրույթներ	օրենսգրքի ընդհանուր մասի դրույթներով, օրենսգրքի գործողության մեջ դնելու մասին օրենքով, ինչպես նաև վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի դրույթներով